ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Արմաշի Մաղաքիա Օրմանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկա 15 ժամ, ռուսաց լեզու 12 ժամ, ինֆորմատիկա 9 ժամ, տեխնոլոգիա (աղջիկների խումբ) 7 ժամ, մաթեմատիկա 11 ժամ, ֆիզկուլտուրա 12 ժամ, կերպարվեստ 4 ժամ և պատմություն 16 ժամ թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչև ապրիլի «18» -ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի «21»-ին՝ ժամը 14^{00}-ին**, Արարատի մարզի Արմաշի Մաղաքիա Օրմանյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 63-36-59 հեռախոսահամարով: